

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

**«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»
ծրագրի (ՎՋՄԲ 83880) 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի
իրականացման համար,**

**«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի (ՎՋՄԲ 84950) 2021թ. դեկտեմբերի
31-ին ավարտված տարվա աուդիտի իրականացման համար**

16 փետրվար, 2022թ.

Հայաստանի Հանրապետություն

**Ծրագրերի անունները՝ «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ
ֆինանսավորում» ծրագիր, «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիր
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, Ֆիքսված բյուջեի վրա հիմնված ընտրություն
ՎՋՄԲ Վարկ № 83880-AM, 84950-AM
Ծրագիր No. P116748, P146199**

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է վարկ
«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»,
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրերի համար և նախատեսում է
գումարների մի մասն օգտագործել «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի
լրացուցիչ ֆինանսավորում», «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրերի
աուդիտի իրականացման համար:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին
հնարավորություն տալ կարծիք հայտնելու վերոնշյալ ժամանակահատվածի համար
«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի
(ՎՋՄԲ 83880-AM, Ծրագիր No P116748) և «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում»
ծրագրի (ՎՋՄԲ 84950-AM, Ծրագիր No P146199) ֆինանսական հաշվետվությունների
վերաբերյալ:

Ծրագրի հաշիվների մատյանը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման
հիմքն է և այն կազմվում է ծրագրի հետ կապված ֆինանսական գործարքների
արտացոլման նպատակով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն՝

ա) Ստացված գումարների ամփոփագիր՝ առանձնացված ձևով ներկայացնելով
Համաշխարհային բանկից, ծրագրի շրջանակներում այլ դոնորներից ստացված և
պետական բյուջեից համաֆինանսավորման գումարները:

բ) Ծրագրի հիմնական բաղադրիչների և ծախսային կատեգորիաների մասով ծախսերի
ամփոփագիր՝ ընթացիկ տարվա և մինչև նշված ժամանակահատվածը կատարված
ծախսերի մասով:

գ) Գումարների ստացման հայտերի ներկայացման համար օգտագործված ամփոփ
հաշվետվությունների կամ ծախսային հաշվետվությունների ամփոփագիր:

դ) Նպատակային հաշվի քաղվածքներ:

ե) Ծրագրի կուտակված գումարները, բանկային մնացորդները և ծրագրի մյուս ակտիվներն
ու պարտավորությունները (եթե այդպիսիք գոյություն ունեն) արտացոլող հաշվապահական
հաշվեկշիռ:

զ) Հաշվապահական քաղաքականության կարևոր դրույթները նկարագրող և այլ բացատրական տեղեկատվություն պարունակող ծանոթագրություններ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն սույնով հրավիրում է իրավասու աուդիտորական կազմակերպություններին (Պատվիրատուի երկրից բոլոր աուդիտորական ընկերությունները, իսկ Պատվիրատուի երկրից դուրս՝ միայն ամբողջովին ընդունելի աուդիտորական ընկերությունները, որոնք ընդգրկված են Համաշխարհային Բանկի՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի համար իրավասու աուդիտորական կազմակերպությունների 2020թ. մարտի 4-ի թարմացումների ցանկում) ներկայացնելու հետաքրքրության հայտ ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված աուդիտորները՝ համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (աուդիտորական կազմակերպության մասին գրքույկներ, Միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներքո կատարված նմանատիպ աշխատանքների նկարագրությունը, նմանատիպ այլ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն) պետք է ներկայացնեն էլեկտրոնային և/կամ թղթային տարբերակով:

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Կազմակերպության ընդհանուր փորձը /առավելագույնը՝ 30 միավոր/
- Կազմակերպության փորձը ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող նմանատիպ առաջադրանքներում / առավելագույնը՝ 70 միավոր /

Աուդիտորական կազմակերպությունն ընտրվելու է Համաշխարհային բանկի կողմից 2011թ. հունվարին (վերանայված հուլիս, 2014) հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎՋՄՎ վարկերի և ՄՁԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված «Ֆիքսված բյուջեի վրա հիմնված ընտրության» մեթոդի համաձայն:

Հետաքրքրված խորհրդատուներն ավելի մանրամասն տեղեկություններ կարող են ստանալ աշխատանքային օրերին՝ ժամը 09.00-17.30 (GMT+4:00), զանգահարելով՝ +374 60-38-00-14 (ներքին՝ 1514): Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել (միայն էլ. հասցեին ուղարկելն ընդունելի է) ստորև նշված հասցեով, մինչև 2022թ. մարտի 2-ը՝ ժամը 17:30 (GMT+4:00):

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0084,
Ջորավար Անդրանիկի 1,
Գլխավոր տնօրեն՝ պարոն Հայկ Հարությունյան
Հեռ: +374 60-380001; +374 60-38-00-14 (ներքին 1514)
էլ. հասցեներ՝ hven@hven.am, tigran.sahradyan@hven.am,
subrec@hven.am